

տեսեր եմ, տեսել եմ, հետեւապէս լ=ն :

Այսպիսով կողովը գումար է, հետեւապէս կողովոցքը գնդախաղ, ինչ որ ենթադրուել էր Հ. Վ. Հացունին եւ հաստատում են վերի օրինակները :

Բայց ո՞ր մնաց Ս. Գրքի կողովը, որ վողով է նշանակում :

Կողովի բառը կողովի ձեւով վայ եւ Թիֆլիսի բարբառում, սակայն մի նոր նշանակութեամբ: Այնտեղ այդ բառը սուսի է նշանակում. ասում են. «ասդի կողովի», «բռնօթու կողովի», այսինքն՝ ասեղի սուսի, քթախոտի սուսի: Այսպիսով Ս. Գրքի կողովը եւ Թիֆլիսացու կողովը նոյնանում են իրենց մատնանշած գաղափարով. երկուսն էլ իրեր գնելու աման են նշանակում. մէկը՝ սակառ, միւսը՝ սուսի: Եւ արդէն կողովի ու կողով միեւնոյն բառերն են, նկատելով, որ փ-ը բ-ի միջոցով լծորդ է վ-ին: Այս մասին գրած եմ ուրիշ տեղ, ուստի աւելորդ եմ համարում կանգ առնել հիմա:

Բայց Թիֆլիսի բարբառում եւ վրաց լեզուում կողովի բառը գործ են ածում եւ մի ուրիշ առումով. «խելքի կողովի» ասում են Թիֆլիսացիք, այսինքն՝ «խելքի սուսի»: «էնիս կողովի» ասում են վրացիները նոյն իմաստով: Վրաստանցի մի նշանաւոր հայ գերբառաստանի ազգանունը էնիկոլովիեան է, այսինքն՝ Սելքիստովիեան: «Սելքի կողովի» ասութեան մէջ մի թեթեւ հեզմանք վայ, որ արտայայտում են շատ ուշիմ երեխաների եւ ոչ ուշիմ հասակաւորների մասին խօսելիս: «Տեսնո՞ւմ ես էս պատրվին — խելքի կողովի ա» ասում են Հաւլաբարցիք (Թիֆլիսի մի թաղ) ուշիմ երեխայի համար: «է՛տ էք քու իմացածը. խելքի կողովի», արհամարհանքով ասում են հասակաւորին: Այս բացատրութիւնը նոյն իմաստն ունի ինչ որ «խելքի սուսի» ասութիւնը: «Սելքի կողովի»ն առաջին հայեացքից կարելի է փոխարեւորութիւն համարել: Բայց փոխարեւորութեանց հարիւրին ութսունը հին մարդու համար պարզ հիւստեւածքներ էին, որ արտայայտում էին մերիկ իրողութիւնը՝ առանց պատկերի եւ փոխարեւորութեան: «Սելքի կողովի»ը ժամանակին հակադէմ են բառացի իմաստով, իբր խելքի սուսի, խելքի աման, այսինքն՝ գլուխ, գանկ: «Սելք» բառը, որ այսօր վերացական դադարի է, ժամանակին թանձրացեալ իր է նշա-

նակել: Այդ ըմբռնումի միտքը մնացել է մեր տծերի մէջ: Մէկի անհիմն կարծիքը լսելով՝ ասում են. «Սելքի աղ անեմ»: Մի ուրիշ ոճ ասում է. «Սելքս հացով եմ կերե՞լ», այսինքն՝ միթէ յիմարացե՞լ եմ: Նշանակում է խելքը մի բան էր, որ կարելի էր ուտել եւ մինչեւ խի վրան աղ անել... «Սելք»ի հին իմաստն էր «ուղեղ», որ երեւում է խելապատակ բառից, որ ուղեղի դրսի մաշկն է նշանակում: Կողովի ասելով երբեմն հակադէմ են ոչ միայն սակառ, այլ եւ սուսի եւ յատկապէս խելքի սուսի: Այդ մտքով է հակադէմ եւ Ոսկերեքանի թարգմանիչը, որ յուն. «կեֆալէ» — գլուխ, բառի դէմ գրել է կողովոցք բառը, որի բունը՝ — կողով, նշանակում էր անշուշտ նաեւ գանկ, գլուխ: Այդ մտքով են բառը գործ ածել նաեւ մեր նախնիները գրերի գիւտից առաջ, այլապէս միեւնոյն խաղին, որի անունը յունարէն գլուխ է, հայերն իրենց կարգին «կողովոցք» անունը ջէլին տայ, որ նոյնպէս գլուխ կամ գանկ նշանակող բունից է ծագում:

Այսպիսով մենք ստանում ենք կողովի բառի բուն իմաստի բոլոր ճիւղաւորումները, կողով — նախապէս նշանակում էր գանկ, գլուխ. ուստի՝ կողովոցք — գանկի խաղ, «կեֆալէ», գլուխ: Գանկը խելքի ամանն է, նրա սուսի. ուստի՝ կողովի կամ կողով — կողով, սուսի: Գանկը կամ գլուխը կրթի են. ուստի՝ կողով — գունդ, գնդակ, «կողովօն»: Սուսը գնդակածե է վայր ընկնում. ուստի՝ մի կողովի թքուք, մի կողովի խուխ: Գոմչի կուն գնդածե է — ուստի կողովի, կողովի: Նկատենք նաեւ, որ գաւնդ բառն ինքը նշանակում է գլուխ. նա կաւնդ բառի մի տարբերակն է, որ նշանակում է գլուխ եւ հանդիպում է Սորենացու պատմութեան մէջ: «Կունդ Արամադը» գրում է նա. (Ա, ԼԲ) այսինքն՝ գլուխ Արամադը. ինչպէս այսօր ասում են գաւառներում «գլուխ գլինի ա», այսինքն՝ լաւագոյն, ամենալաւ, առաջնակարգ գլինի: Այդ բառն ապրում է ժողովրդի բերանում. ասում են. «Կնդով անել», այսինքն գլխով անել, համաձայնութեան նշան տալ գլխով. «կնդել», որ է «կունդել», այսինքն՝ գլուխը տակից խուզել, գլխին մաղ ջթողնել. «կունդ ու կծիկ», այսինքն՝ անդամաւոր: Չեւի կողմից նոյնպէս գաւնդ եւ կաւնդ նոյն բառերն են, նկատելով որ գ եւ կ լծորդ են բո-